Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«_6_»__ապրիլի__2021 թ. թիվ 154 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԿԵՆՍԱԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կենսաինֆորմատիկայի գիտական լաբորատորիան (այսուհետ՝ Լաբորատորիա) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կառուցվածքային գիտական ստորաբաժանում է:

1.2. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ԳԿՄԿ) Լաբորատորիան հիմնադրվում է կենսաինֆորմատիկայի գիտական խմբի՝ որպես համակարգչային ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության առաջատար գիտական օջախի հենքի վրա, որը գործում է ՀՀ ԳԱԱ -ում 2000 թ.-ից:

1.3. Լաբորատորիայի լրիվ անվանումն է՝ *ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կենսաինֆորմատիկայի գիտական լաբորատորիա:*

Կրճատ անվանումն է՝ *ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿԻԳԼ*

Լաբորատորիայի անգլերեն անվանումն է՝ *The Bioinformatics Scientific Laboratory of The International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of Armenia.*

Կրճատ անվանումն է՝ *BISL ISEC NAS RA*

Լաբորատորիայի հասցեն է՝ Մ. Բաղրամյան 24դ, 0019 Երևան, ՀՀ

1.4 . Լաբորատորիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԳԿՄԿ կանոնադրությամբ, ԳԿՄԿ կառավարման մարմինների որոշումներով, ԳԿՄԿ ներքին կարգապահական կանոններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.5. Լաբորատորիան ունի պաշտոնական երկլեզու կայքէջ՝ http://bioinformatics.am/ :

1.6. Լաբորատորիան ունի ձևաթուղթ և տարբերանշան, որը ներկայացված է Լաբորատորիայի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հասցեով՝ http://bioinformatics.am/:

2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ա) Լաբորատորիայի գործունեության նպատակն է կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի և կենսաինֆորմատիկաի զարգացման ոլորտում նորագույն տեխնոլոգիաների, մեթոդների և միջոցների կիրառմամբ գիտական, ուսումնական և հետազոտական գործունեության իրականացումը, ասպիրանտների, մագիստրոսների հետ գիտաուսումնական աշխատանքների կատարումը:

բ) Կենսաինֆորմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի ոլորտներում մագիստրանրտների և ասպիրանրտների կողմից նորագույն տեխնոլոգիաների գործադրմամբ սարքերով և սարքավորումներով աշխատելու հմտությունների ձեռքբերում,

գ) կենսաինֆորմատիկայի, համակարգչային ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և ծրագրավորման ոլորտներում գիտական և հետազոտական ուսումնասիրությունների և գիտական ատենախոսությունների պատրաստում,

դ)) կենսաինֆորմատիկայի, համակարգչային ֆիզիկայի, քիմիայի ոլորտներում որակյալ մասնագետների պատրաստում և վերապատրաստումների իրականացում:

2.2 Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար Լաբորատորիան իրավասու է համագործակցել և կնքել համաձայնագրեր այլ կազմակերպությունների և գործընկերների հետ (նաև միջազգային), մասնակցել գիտաժողովների կենսաինֆորմատիկայի ոլորտում առաջարկվող ծրագրերի իրականացման շրջանակներում:

2.3 Լաբորատորիայում կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ և վերապատրաստումներ հետևյալ ուղղություններով.

ա. Կենսաինֆորմատիկա և մոլեկուլային դինամիկա

բ. Համակարգչային փորձ

գ. Համակարգչային կենսաբանություն

դ. Համակարգչային քիմիա

ե. Համակարգչային ֆիզիկա

զ. Ծրագրավորում

2.4 Լաբորատորիան համագործակցում է ԳԿՄԿ-ում գործող այլ լաբորատորիաների և ստորաբաժանումների, հրատարակվող գիտական ամսագրերի, հանդեսների խմբագրական-հրատարակչական խորհուրդների հետ.

2.5 Համագործակցում է ԳԿՄԿ մյուս ստորաբաժանումների և այլ բուհերի գիտահետազոտական կենտրոնների հետ.

2.6. Կազմակերպում է ինքնուրույն գիտական սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ.

3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

3.1 Կենսաթաղանթների համակարգչային մոդելավորում և ուսումնասիրություններ մոլեկուլային դինամիկայի (ՄԴ) մեթոդով.

3.2 Բարդ, մոլեկուլային համակարգերի, այդ թվում՝ մակերեսային ակտիվ նյութերի և պոլիմերների լուծույթների համակարգչային մոդելավորում և ՄԴ ուսումնասիրություններ:

3.3 Մասնագիտացված ծրագրային փաթեթների մշակում և ծրագրավորում:

4. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Լաբորատորիան անմիջապես ղեկավարում է կենսաինֆորմատիկայի գիտական լաբորատորիայի վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԳԿՄԿ տնօրենը:

4.2. Լաբորատորիայի վարիչի իրավունքներն են՝

4.2.1. ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր, իր գործունեությունը իրականացնելու համար:

4.2.2. Ներկայացնել առաջարկություններ ԳԿՄԿ տնօրենին՝ Լաբորատորիայի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

4.2.3 Ընտրել թեկնածուներ թափուր պաշտոնների համար և ներկայացնել սահմանված կարգով աշխատանքի ընդունման փաստաթղթերը:

4.2.4 Ներկայացնել առաջարկություններ ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենին և տնօրենին Լաբորատորիայի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

4.2.5. ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

4.2.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր (այդ թվում միջազգային) ՀՀ գիտական կազմակերպությունների, միջազգային կառույցների և տվյալ ոլորտի այլ մասնագիտացված հաստատությունների հետ:

4.3 Լաբորատորիայի վարիչի գործառույթներն են՝

4.3.1. Ղեկավարել, համակարգել և վերահսկել լաբորատորիայի ընթացիկ գործունեությունը:

4.3.2. Ստորագրել Լաբորատորիայի կողմից ներկայացվող փաստաթղթերը, ապահովել Լաբորատորիայի գործառույթների շրջանակում զեկուցագրեր, տեղեկանքներ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր կազմելու գործընթացը:

4.3.3. Կատարել աշխատանքի բաժանում Լաբորատորիայի աշխատողների միջև:

4.3.4. Մշակել և ԳԿՄԿ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել բազային ֆինանսավորման հայտը և հաշվետվությունները:

4.3.5 Հետևել լաբորատորիայի գիտաշխատողների կողմից ծրագրի կատարման ընթացքին:

4.3.6. Վերլուծել և ամփոփել լաբորատորիայի գիտաշխատողների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները:

4.3.7. Լաբորատորիայի վարիչը պատասխանատու է Լաբորատորիայի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Լաբորատորիայի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

4.3.8. Լաբորատորիայի վարիչը հաշվետու է ԳԿՄԿ գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենին և տնօրենին:

5. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. Լաբորատորիայի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԳԿՄԿ տնօրենը՝ Լաբորատորիայի վարիչի առաջարկությամբ:

5.2 Լաբորատորիայի աշխատողները կատարում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականները՝ սահմանված աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով, և պատասխանատու են դրանց կատարման համար:

5.3 Լաբորատորիայի աշխատողներն իրականացնում են Լաբորատորիայի գործառույթներից բխող աշխատանքներ:

5.4 Լաբորատորիայի աշխատողները մասնակցում են միջազգային տարբեր գիտաժողովների և սեմինարների, ներկայացնում են զեկուցումներ և հրատարակում հոդվածներ:

5.5 Լաբորատորիայի աշխատողները կարող են տպագրել գիտական հոդվածներ, ձեռնարկներ և գրքեր ինչպես ՀՀ գիտական ամսագրերում, հանդեսներում և պարբերականներում, այնպես էլ միջազգային գիտական հեղինակավոր ամսագրերում:

6. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

6.1 Լաբորատորիայի աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից, դրամաշնորհային ծրագրերի (ազգային և միջազգային), ինչպես նաև մասնավոր կազմակերպություններից, և անհատներից փոխանցված նյութական արժեքների և կամավոր նվիրատվությունների միջոցով:

6.2 Լաբորատորիան, իր գործունեության նպատակներին և խնդիրներին համապատասխան, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ սահմանած լիազորությունների շրջանակներում, տիրապետում և օգտագործում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի կողմից իրեն տրամադրված և իր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքը նշանակությանը համապատասխան:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Լաբորատորիայի վերակազմակերպումը կամ լուծարումը, ինչպես նաև Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը իրականացվում է օրենքով սահմանված կարգով և ԳԿՄԿ կանոնադրությանը համապատասխան: